ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 19-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ծառայողական ավտոմեքենաների նպատակային օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալին և փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալին՝ ենթակա անձնակազմին հրահանգավորել ծառայողական ավտոմեքենաներն օգտագործելիս առաջնորդվել բացառապես հիշյալ կարգի պահանջներով:
3. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության պետին՝ սահմանել հսկողություն սույն հրամանով հաստատված կարգի պատշաճ կատարման նկատմամբ, արձանագրված յուրաքանչյուր խախտման փաստով սահմանված կարգով իրականացնել ծառայողական քննություն:
4. Հրամանը ծանոթացնել ըստ առնչության:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

06.03.2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ ՆԳ նախարարի 2025 թվականի
« 06 » մարտի N 19- Լ հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ծառայողական ավտոմեքենաների օգտագործման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով Ներքին գործերի նախարարության ծառայողական ավտոմեքենա է համարվում՝

1) Ներքին գործերի նախարարությանը ենթակա մարմինների ղեկավարի պաշտոն զբաղեցնող անձանց սպասարկելու նպատակով նախատեսված, իրավասու պաշտոնատար անձի իրավական ակտով նրանց ամրակցված ավտոմեքենան (այսուհետ՝ ծառայողական ավտոմեքենա), որը հատկացվում է նրանց կողմից իրենց պաշտոնական պարտականությունների կատարման հետ կապված տրանսպորտային փոխադրումներ իրականացնելու համար.

2) Ներքին գործերի նախարարության, այդ թվում՝ նախարարությանը ենթակա մարմինների անձնակազմի սպասարկման համար նախատեսված, իրավասու պաշտոնատար անձի իրավական ակտով ստորաբաժանմանը հատկացված և ստորաբաժանման աշխատողին ամրակցված ավտոմեքենան, որը հատկացվում է անձնակազմի կողմից պաշտոնական պարտականությունների կատարման հետ կապված տրանսպորտային փոխադրումներ և որոշակի կանոնադրական գործառույթներ իրականացնելու նպատակով:

3. Սույն կարգի դրույթները չեն տարածվում Ներքին գործերի նախարարության հերթապահ ավտոմեքենաների նպատակային օգտագործման հետ կապված հարաբերությունների վրա:

4. Ծառայողական ավտոմեքենան անհրաժեշտ է օգտագործել բացառապես հետևյալ ծառայողական նպատակներով՝

1) հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականխման, կանխման, հայտնաբերման, խափանման և բացահայտման աշխատանքների իրականացում.

2) հասարակական կարգի պահպանությանն ուղղված ծառայությունների իրականացում.

3) աշխատանքային և ոչ աշխատանքային ժամերին ստացվող ահազանգին արագ և որակյալ արձագանքելու նպատակով ահազանգի կամ դեպքի վայր մեկնում.

4) օպերատիվ-հետախուզական կամ կանխարգելիչ միջոցառումների իրականացում.

5) Երևան քաղաքում և մարզերում տարաբնույթ ծառայությունների (այդ թվում՝ ուժեղացված) իրականացում.

6) հասարակական հնչեղություն ունեցող և արտառոց բնույթ կրող միջադեպերին արձագանքում.

7) պլանավորված և հանկարծակի ստուգումների իրականացում.

8) իրենց իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և օտարերկրյա բարձրաստիճան անձանց այցերի ընթացքում ուղեկցումների իրականացում, պաշտոնական միջոցառումներին մասնակցություն.

9) ստորաբաժանումների կողմից իրենց կանոնադրական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ տրանսպորտային փոխադրումների իրականացում:

5. Արգելվում է՝

1) անձնական նպատակներով ծառայողական ավտոմեքենայի շահագործումը.

2) ծառայողական ավտոմեքենաներն անսարք վիճակում շահագործելը:

6. Սույն կարգի իմաստով անձնական նպատակներով ծառայողական ավտոմեքենայի շահագործում է համարվում՝

1) ծառայողական ավտոմեքենան այլ անձանց տրամադրելը.

2) ծառայողական ավտոմեքենայով ընտանիքի անդամներին կամ այլ անձանց փոխադրելը.

3) դրանց համար նախատեսված վառելիքը սույն կարգի 4-րդ կետով չնախատեսված նպատակներով կամ այլ տրանսպորտային միջոցների համար օգտագործելը.

4) հանգստի, ժամանցի, առևտրի կամ համանման այլ վայրեր այցելելը.

5) ծառայության հետ չկապված, ինչպես նաև անձնական նպատակներով ցանկացած այլ վայրեր մեկնելու համար ծառայողական ավտոմեքենան օգտագործելը, այդ թվում՝ աշխատանքային ժամերի ընթացքում:

7. Սույն կարգի իմաստով ավտոմեքենան անսարք վիճակում շահագործել է համարվում՝

1) չաշխատող լուսարձակներով, խափանված շարժիչով կամ փոխանցման տուփով կամ ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշման 2-րդ հավելվածով սահմանված ցանկում առկա տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքություններից և պայմաններից որևէ մեկի առկայության պայմաններում ավտոմեքենան վարելը.

2) սահմանված ժամկետներում ու եղանակային պայմաններից ելնելով չփոխարինված անվադողերով վարելը.

3) ավտոմեքենան ցանկացած այլ անսարքության պայմաններում վարելը, որը հետագայում կարող է հանգեցնել ավտոմեքենայի լրիվ կամ մասնակի խափանման կամ վտանգ ներկայացնել ավտոմեքենայում գտնվող կամ այլ անձանց համար.

4) ավտոմեքենայում այլ սարքավորումներ տեղադրելը (գազաբալոնային համակարգեր և այլն):

8. Ծառայողական ավտոմեքենան անհրաժեշտ է օգտագործել խնամքով՝ սույն կարգի պահանջներին և դրա նշանակությանը համապատասխան: